

ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԱՆԻԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ, 1904 թ. յունուար, փետրուար.—Հետաքրքրական է «Արարացի մատենադրեր Հայաստանի մասին» յօդուածը։ Ոչ մասնագէտի համար բաւական բռնադրօտիկ է թըւում պրոֆ. Ննսէնի փորձը՝ Բարեւոնի մէջ գտնուած հասեւան մի արձանագրութեան հայերէն ընթերցումը։ Յամենայն դէպս շատ հետաքրքրական է այն համոզուած ոգևորութիւնը և ինքնավստահութիւնը, որով յարգելի պրոֆեսորը պաշտպանում է իր հատ-հայկական լեթերիան։ Երբևէն հզօր հաս-երից «աղգերնու» սերուիւր անշուշտ կը լցնի մեր շատ ազգասէրները սիրաւ ինքնագոհութեամբ...

ՀԱՆԻԷՍ ՀԱՅԱՐԻՏՈՒԹԵԱՆ, *Zeitschrift für armenische Philologie*. 1903, 1, 2, 3 Hef. — Մարբուրգի այս մասնագիտական թերթը տանում է գիտական պահանջներին համեմատ։ Բընականաբար, այդպիսի հրատարակութիւնը առանց նիւթական նպաստի չի կարող յարատեւ գոյութիւն ունենալ։ Երեկ այդ է պատճառը, որ ամբողջ ասորայ ընթացքում լոյս են տեսել միմիայն երեք տետրակներ։ Օտարազգիներից աշխատակցում են այնպիսի մասնագէտներ, ինչպէս Փրանց Նիկոլաուս Ֆինկ և Ա. Մէյէ։ Հետաքրքրական է իրեն մեր պատմութեան նիւթ Մկրտիչ Ղազարեանի յօդուածը հայերի մասին արաբական իշխանութեան ներքոյ (*Armenien unter der arabischen Herrschaft bis zur Entstehung des Bagratiden reiches*), որը կազմելու հեղինակը օգտուել է նաև արաբական

աղբիւրներից։ Մի բան, որ պակասում է «Հանդիսին», այդ այն է, որ այդտեղ համադրւմար չի անում այլ հրատարակութիւնների մէջ լոյս տեսած հատագիտական յօդուածների մասին։ Եթէ կարելի լինէր այս գիտութեամբ հետաքրքրուող եւրոպական գիտական հաստատութիւններից և հայ մասնաւոր անհատներից մշտական նպաստ ապահովել այդ հրատարակութեան, անշուշտ նա կարողութիւն կ'ունենար թէ աւելի կանոնաւոր կերպով լոյս տեսնելու և թէ լրացնելու նաև այն պակասը, որի մասին մենք ակնարկեցինք։ Գործի զլուխ են կանգնած այնպիսի մարդիկ, որոնց համար դժուար չէր լինի յայտնի ջանքերից յետոյ իրադարձել մեր ասածները։

ԱՐԱՐԱՅ, 1904 թ. № 2։ Առանձին հետաքրքրութեամբ կարդացւում է պ. Մ. Արեղեանի «Ժողովրդական խաղեր» յօդուածը։ Մեր ժողովրդական երգերի մէջ սովորաբար մենք ոչ մի կապ չենք տեսնում. օրինակի համար հետեւալ քառատողում.

Արազը հեշտացել ա,
Ճամբէքը կոշտացել ա.
Խաբար տարէք իմ կարին,
Աւնողս շատացել ա:

Արեղեանի տուած բացատրութիւնները միանգամայն համալիչ և սրամիտ են թւում։ Բերած օրինակի մասին նա ասում է.

«Այս խաղի երկու մասի մէջ ըստ երեւոյթին ոչ մի կապ չկայ։ Բայց Արազի վրայ բնակողներին հարցնենք, և նրանք կ'ասեն, որ Արազը հեշտա-

նում է ցուրտ աշնանը կամ ձմեռը։ Այս ժամանակ է, որ ճանապարհներըն էլ կոշտանում են. անձրևները դալուց կամ ձիւն դալուց և հալչեալց յետոյ՝ ամառուայ ճանապարհները վրայ դիպած հողը ցելս է դառնում և մի ցուրտ դիշեր ստոշելով կոշտ կոշտ մընում է։ Ահա ցուրտ աշնան կամ ձմեռուայ նկարագիրը գետի և ճանապարհի պատկերով։ Բայց խաղի բուն իմաստը հասկանալու համար այսքանը գեռ բաւական չէ։ Պէտք է իմանալ, որ ցուրտ աշնանը կամ ձմեռն են աղ-

ջիկ ուղում և հաղթանիք անում։ Այժմ երևակայենք մի աղջիկ, սրին շատ ուզողներ կան, բայց ինքն ուրիշն է սիրում։ Նրա սիրականն ուրիշ տեղ է, և նա ահ ու դողի մէջ է, թէ մի գուցէ իրեն ստիպեն ուրիշի և ոչ իր սիրելիին մարդու գնալ։ Նա դուքս է գալիս, նայում չուրջը հեշտացած Արալին ու կոշտացած ճանապարհներին և իւր լցուած սիրտը զեղում երգով.

Խաբար տալէք իմ ետքին,—

Մուշտարիս շատացել առ։

Պ Ա Տ Ա Ս Խ Ա Ն Ն Ե Ր

ՍՈՍԿՈՒԱ, ա. Մ. Միանաբանին.— «Մուրճ»-ի 1 օր. ուղարկում է Յովնանանն դարոցին։

ԹԻՖԼԻՍ, պ. Գր. Աբաֆելովին.— «Մուրճ»-ի 1 օր. ուղարկում է Թիֆլ. էժան. գրադարանին։

ԹԻՖԼԻՍ, պ. Գ. Տէր-Մարգարեանին.— «Մուրճ»-ի 1 օրինակ ուղարկում է Գաղմաղալինեան դպրոցին։

ՄՈՍԿՈՒԱ, պ. Ռ. Գէորգեանին.— «Մուրճ»-ի 1 օր. ուղարկում է Բաղաքի զեղի համայնքին։

ՊՐՈՎԻԴԵՆՍ, Ազգ. Գրադ. վարչութեան.— Կանոնադրապէս ուղարկում ենք ձեզ բոլոր համարները. եթէ ձեզ չեն հասել №№ 1 և 11, մեղը մերը չէ. կրկին ուղարկեցինք № 11, իսկ № 1 սպառուած է։

ԱԼԵՔՍԱՆԴՐՈՊՈԼ, Ա. Տ.-Ա.— Թարգմանութիւններից արուած Թարգմանութիւնները մենք սովորաբար չենք տպում. պէտք է բընադրից Թարգմանել։

ՅԻԻՐԻՍ, պ. Առանձարին.— Բազուկից ոչ մի պատասխան։ № 1 կրկին ուղարկեցինք։

ՇՈՒՇԻ, պ. Պ. Զ.— Անցեալ տարւայ ոչ միայն № 1, այլև №№ 2, 3, 4, 11 եւ 12 սպառուած են, եւ մենք էլ պատրաստ ենք յետ գնելու։ Եթէ մեզ վերադարձնողներ լինեն, ի նկատի կ'ունենանք եւ ձեր խնդիրքը։

ԼԵԻԱՇԻ, բժ. Ա. Մ.— Մնաց յաջորդ համարին։

Ի դիտութիւն հեղինակների՝ խմբագրութիւնս յայտնում է, որ մինչև 1903 թւականի դեկտեմբեր ամիսը լոյս չտեսած ձեռագրները ոչնչացրուած են։ Յանկալի է, որ մեր ինքնուրոյն գրողները հետեւէին peu de mots, beaucoup d'idées սկզբունքին...